# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Բիո-Քիմ ՍՊԸ-ն ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/7 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 37 | ԲԻՍԻ ԴԵԶԻՆՈՆ | ԲԻՍԻ | ԲԻՍԻ | Բիո-Քիմ,, ՍՊԸ | BC DEZINON Հեղուկ խտանյութ մաքրման և նախամանրէազերծումային ախտահանման համար BC Dezinon-ը նախատեսված է տարբեր տեսակի ստոմատոլոգիական և վիրաբուժական գործիքների (ներառյալ բոռեր, բերանի խոռոչի գործիքներ, ունելիներ, զոնդեր, դրիլներ և այլն), ճկուն և կոշտ էնդոսկոպների, բժշկական սարքավորումների և լաբորատոր սպասքի արագ և բարձ կարգի ախտահանման համար: Հատկությունները - Չի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պարունակում ալդեհիդ, ֆենոլ և սպիրտ -Պիտանի է բոլոր ստոմատոլոգիական և վիրաբուժական գործիքների համար - Առավելագույնս տնտեսող է և ունի արագ ազդեցություն - Ունի լավ մաքրող և ախտահանող ազդեցություն - Կոռոզիա չի առաջացնում: Բաղադրությունը BC Dezinon-ը պարունակում է դիդեցիլդիմեթիլամոնիում քլորիդ, պոլիհեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդ, ոչ իոնային մակերևութաակտիվ նյութ, լաուրիլդիմեթիլամինօքսիդ, կոռոզիայի ինհիբիտոր, օժանդակ նյութեր և ջուր: Կիրառումը Առաջարկվող չափաքանակը 0.1% - սովորական կիրառման համար 0.5% - ախտահանման և նախամանրէազերծման համար: Օգտագործման եղանակը Պատրաստել BC Dezinon միջոցի անհրաժեշտ կոնցենտրացիայի լուծույթ՝ խտանյութը ջրի հետ խառնելով և օգտագործել ստացված լուծույթը ախտահանման և նախամանրէազերծումային մաքրման համար: Պատրաստել BC |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Dezinon-ի 0.5%-ոց լուծույթ, ախտահանվող գործիքները ընկղմել լուծույթի մեջ և թողնել այնտեղ 30 րոպե: Զգուշությամբ հանել գործիքները լուծույթից, լվանալ հոսող ջրի տակ կամ մաքուր ջրի մեջ, չորացնել և պահել: Ավելի մանրամասն ախտահանման ձևերի և տևողության մասին կարող եք կարդալ օգտագործման հրահանգում: Ազդեցության ոլորտը Հակամանրէային ազդեցություն (գրամդրական և գրամաբացասական մանրէներ ներառյալ տուբերկուլյոզի միկոբակտերիաներ),մանրէներ (ներառյալ կանդիդոզ և դերմատոֆիտիա), վիրուսներ (ներառյալ հեպատիտ A,B,C, ՄԻԱՎ վարակի հարուցիչներ, պոլիոմելիտ): Անվտանգության կանոններ -Օգտագործել լավ օդափոխվող տարածքներում՝ կրելով պաշտպանիչ դիմակ և ձեռնոցներ: - Պահել երեխաներին անհասանելի տեղում՝ +5°C-ից +35°C ջերմաստիճանում: - Չօգտագործել պիտանելիության ժամկետի ավարտից հետո: - Աշխատանքային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լուծույթների պահպանման ժամկետը 14 օր է: - Լուծույթները պահել մաքուր, հերմետիկ փակվող տարաներում: - Զգուշանալ աչքերի մեջ և մաշկի վրա ընկնելուց: Ընկնելու դեպքում անմիջապես լվանալ առատ ջրով: Անհրաժեշտության դեպքում դիմել բժշկի: Փաթեթավորում Տարա-1000 մլ. |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Բիո-Քիմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/7 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 37 | | | | | |